Խ. ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ԱՌԱՋԱԲԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ*

Ժաննա Բեգլարյան

Բանալի բառեր՝ հայ նոր գրականություն, անցյալի նվաճումներ, կլասիցիզմի ուղղություն, հայի հոգեկերտվածք, գրականության օբյեկտ, համաշխարհային քաղաքակրթություն, ազգապահպան գործոն, գեղագիտական սկզբունք, ռոմանտիզմի հայ ներկայացուցիչներ:

Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի՝ որպես հայ նոր գրականության առաջնեկի առաջաբանը բանալի է վեպի գաղափարաբանական, գեղագիտական նկատառումները ճիշտ ընկալելու համար: Ակադեմիկոս Ս. Սարինյանը «Վերք Հայաստանին» բարդ ստեղծագործություն է համարում, «բարդ, ոչ այնքան հոգեբանական խճճված հանգույցներով, սյուժետային անցումների խորհրդավորությամբ, որքան ինտելեկտուալ ներքին հոսքերի զուգորդությամբ»:[1]

Ներքին հոսքերի այս զուգորդումներին վեպի հեղինակն անդրադառնում է առաջաբանում՝ դառնալով իր վեպի առաջին մեկնաբանը: Առաջաբանը բացելով Հին Արևելքի արքաներից մեկի՝ Լիդիայի թագավոր Կրեսոսի կյանքի ճակատագրական մի պահի պատմությամբ, իրեն համեմատում է Կրեսոսի քսանամյա համր որդու հետ, որի համր լեզուն բացվում է հոր գլխին կախված վտանգի պահին: Ահա ուր որ է՝ պարսիկի սուրը պիտի իջներ Կրեսոսի գլխին, կամ Կրեսոսն ինքը վերջ տար իր կյանքին՝ անօրեն պարսիկին չգերվելու համար, բայց թե՛ Կրեսոսը, թե՛ պարսիկը ետ են կանգնում ճակատագրական հարվածից, որովհետև հոր համար պահի խորհրդավորությունը լցվում է համր որդու խոսելով, իսկ պարսիկին պարզ է դառնում, որ իր առջև փախչողը Կրեսոսն է, որին հրամայված էր չսպանել:

Որդիական սիրո հզոր ուժի բացահայտման խորհրդին է հետամուտ հեղինակը, որ կարող է հոր, Աբովյանի պարագայում՝ ազգի, հայրենիքի համար ճակատագրական պահին ջարդ ու փշուր անել բնության մեջ կամ տիեզերքում գոյություն ունեցող ամենաամուր կապանքն անգամ: «Ոչ քսան-երեսուն տարուց ավելի ա՝ իմ ազիզ հեր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթթվում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուքը իմ աչքիցը, ախն ու վախը իմ բերանիցս չի պակասում, այ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի»:[2]

Գրաբարով ստեղծագործական բավականաչափ ճանապարհ անցած Աբովյանը հոգու դրամատիզմով էր գիտակցում գրական այն ճեղքվածքը, որ ստեղծվել էր իրեն նախորդած ժամանակաշրջանների և իր ժամանակի միջև: Իր ժամանակում ստեղծվող գեղարվեստական գրականությանը կարող էին հաղորդակցվել մի բուռ գրաբարահմաց ընտրյալներ և ոչ թե ժողովուրդը: Գրաբարը վաղուց գրոց լեզու էր և ոչ թե հաղորդակցման, այն մեռած լեզու էր, և նրանով ստեղծվող գրականությունը թեև հարգի էր, բայց հասանելի չէր «հարիր հազարին»:

Հայ գրականության անցյալի նվաճումները յուրացրած Խ. Աբովյանը քաջատեղյակ էր մեր աշխարհականացած գրականությանը՝ Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա: Սայաթ-Նովայի թիֆլիսահայ բարբառով գրած երգերը երգվում էին ժողովրդի մեջ: Եվ, այ-

* Հոդվածն ընդունվել է 04.02.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել »Գրիգոր Նարեկացի» համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

նուամենայնիվ, Աբովյան գրողի լեզուն փակ էր, որովհետև անհասկանալի էր սիրելի ազգին: 19-րդ դարասկզբին Մխիթարյան միաբանության գրողները, որդեգրելով օտարածին կլասիցիզմի ուղղությունը և նրա անխախտ օրենքները, գրականություն են բերում ստեղծագործություններ, որոնք իրենց գաղափարաբանությամբ ու վերամբարձ գրաբարով խորթ են մնում ժողովրդին: «Հայ ազգը պետք է որ սիրտ չի ունեցած ըլներ, որ էսքան բաները գլխովը անց են կացել, մեկ մարդ էլ չի դուրս եկել, մեկ սրտի բան գրի, ինչ կա, եկեղեցու վրա յա, աստծու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոֆոկլեսի գրքերը՝ երեխեքն էլ գլխատակներին ունեին, չունքի բոլորը աշխարհի բաներ են»[3]:

19-րդ դարասկզբին ստեղծվող գրականությունն ավելի շատ գրականության պատմական զարգացման առաջընթացն էր ապահովում, քան բավարարում ժողովրդի հոգևոր պահանջները:

Եվրոպական մշակութային տեղաշարժերին քաջատեղյակ Աբովյանը չէր կասկածում իր ազգի ստեղծագործ ոգու ներուժին, համոզված էր, որ իր ընտիր ազգը կարող է համընթաց քայլել ժամանակի մշակութային նվաճումներին, բայց պահպանողական ուժերն արհեստականորեն կասեցնում են այդ առաջընթացը:

Աբովյանը Դորպատից հայրենիք էր վերադարձել կրթական համակարգում, գրականության մեջ լուսավորական տեղաշարժերի մեծ ծրագրերով: Պահպանողական ուժերի հետ շարունակական բախումները հոգևոր սլացքներն արգելակող հանգամանքներ էին: Աբովյանի համար դյուրին չէր միանգամից լեզվի, գաղափարի, թեմատիկայի խնդիրներ լուծել: Մի քանի լեզուներով ընթերցող Աբովյանը գիտեր, որ Եվրոպայում շատ ժողովուրդներ թողնելով իրենց հին լեզուն, անցել էին նորին: Ռուսաստանում Կարամզինը առաջ էր քաշել «Գրիր այնպես, ինչպես խոսում ես, խոսիր այնպես, ինչպես գրում ես» կարգախոսը: Աբովյանը երկմտելու պատճառներ ուներ: Նրա «Նախաշավիղը», որը ներկայացրել էր Կազանի համալսարան՝ գիտական աստիճան ստանալու համար, մերժվել էր՝ գռեհիկ լեզվով գրած լինելու համար. «Չունքի ես էլ էի ուզում, որ ինձ վրա չծիծաղին, չասեն կոպիտ ա, հիմար ա, որ քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն չգիտի, ես էլ էի ուզում, որ ասեն. «Օ՜հ, էնպես խորը, խրթին շարադրել գիտի», որ սատանեն էլ միչիցը մեկ բառ չի կարող իմանալ: … Ես էլ էի ուզում, որ իմ գլուխս ցույց տամ, որ ինձ վրա զարմանան ու ինձ գովեն՝ «թե հայերեն շատ խորը տեղյակ եմ» [4]…

Նոր գրականություն ստեղծելու ճանապարհին լեզվի խնդիրը միակը չէր, որ դրված էր Աբովյանի առջև, բովանդակության առումով էլ ասպարեզում եղածը չէր բավարարում ժամանակի պահանջները: «Ռուսի, նեմեցի, ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էդ բաները դուր գալիս: Նրանք էլ էին կարդում էն բաները, որ մարդի սիրտ կարող է գրավիլ, չունքի սրտի բաներ էին, ով չի սիրիլ, ով չի ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ինչ զատ են» [5]:

Աբովյանը գիտակցում էր, որ ստեղծվելիք գրականության գաղափարաբանության հիմնական շեշտադրումները պիտի դառնան Հայաստանը՝ որպես մարդկային քաղաքակրթության փրկության և աստվածաշնչյան դրախտի օրրան, նրա պատմական հերոսական անցյալը, ներկա օրհասական քաղաքական վիճակը, իր ընտիր ազգի ապագա ճակատագիրը: «Մտածում էի՝ ձեր կորցրած փառքն ու մեծությունը, մեր առաջին՝ էն հիանալի թագավորաց, իշխանաց գործքն ու կյանքը, հայրենյաց մեր սուրբ աշխարքի առաջվան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի անանման բնությունը և արած քաջությունները: Մասիս առաջիս էր կանգնած միշտ…

...Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրենց որդին եմ, Եվրոպա, թե Ասիա, ինձ անդադար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյան թոռը, էջմիածնա որդին, դրախտի բնակիչը»[6]:

Հայը, իր հոգեկերտվածքի բարձր հատկանիշներով դառնալով այս գրականության օբյեկտը, պիտի ապացուցեր հարատևելու և ի վերուստ տրված բնական սքանչելիքների արժանավոր տիրոջ իր իրավունքը: Պետք է ապացուցեր, որ, փոքր ազգ լինելով, համաշխարհային քաղաքակրթություն բերած իր խոշոր նվաճումներով արևի լույսի տակ նույնքան ազատության, ինքնիշխանության իրավունք ուներ, որքան իր ժամանակի ազատ ու ինքնիշխան մեծ ազգերը: Այս գրականության գաղափարաբանության մեջ լեզուն ու հավատը, որպես ազգապահպան գործոններ, պետք է դառնան ոչ միայն քարոզչություն, այլև պաշտամունք. «Մեկ ազգի պահողն էլ՝ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վայն եկել ա մեր օրին: Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման»[7]:

Հայոց նոր գրականությունը պիտի բաբախեր հերոսականության ելևէջումներով, որով ափեափ լիքն էր մեր ժողովրդի բանավոր գրականությունը՝ բանահյուսությունը՝ սկսած գողթան երգերից մինչև Աբովյանի ժամանակներում պատմվող ու երգվող Քյոռ Օղլու խաղերն ու ասքերը: Աբովյանը խորն էր գիտակցում բանահյուսության՝ որպես գեղարվեստական գրականությունը սնող անսպառ աղբյուրի նշանակությունը: Բանահյուսության մեջ են պահպանված հայ ժողովրդի լեզվամտածողության ողջ փիլիսոփայությունը, հոգեկերտվածքի յուրատիպությունն ու պատմական անցած ճանապարհի գեղարվեստական խտացումները: Այս եղանակով հայոց ստեղծվելիք նոր գրականությունը կապահովեր իր ժողովրդայնությունը: Բնականաբար, այս գրականության հերոսը պիտի լիներ պատմության դաժան հարվածներին դիմացած, հողին կպած ժողովրդի զավակը՝ իր հերոսականությամբ հավասարված մեր պատմավիպական երգերի հերոսներին, էպոսի դյուցազուններին. «Երեսուն տարվա փակ լեզուս Աղասին բաց արեց», կամ՝ «Միտք արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ, արի՝ քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալիր, ղրաղ դիր, մեկ աշըղ էլ դու դառ»[8]:

Գեղագիտական այս սկզբունքներով է առաջնորդվել Խ. Աբովյանը՝ հայ նոր գրականության առաջին վեպի՝ «Վերքի» հերոս դարձնելով «աղքատ ու մեռած Աղասուն»: Աբովյանի գլխավոր հերոսը ժողովրդական վրիժառու է՝ դյուցազնական ուժ ու հավատով, որը վիպական գործողությունների զարգացման ընթացքում վերաճում է հայրենիքի ազատության համար պայքարող զինվորի: Նման գրականությունը ոչ տասի, արդեն «հարիր հազարի» գրականություն էր: «Վերքում», բացի Աղասուց, մի շարք կերպարներ կան, որ հեղինակի գաղափարների կրողներն են:

Գեղագիտական նման սկզբունքների համոզչությամբ Աբովյանը դեռ տարակուսում էր՝ ընդունելի՞ կլինի իր ստեղծագործությունը սիրելի ժողովրդին: Նրա տարակուսանքը փարատողը դառնում է մանկության ընկերը՝ ժամանակի անվանի բժիշկ Աղաֆոն Սմբատյանը, ով, ծանոթանալով «Վերքի» առաջին էջերին, խորհուրդ է տալիս գործը շարունակել նույն ոգով: Այլևս ջարդված էր լեզվական կապանքը, այլևս մտքի հոսքի դեմն առնելն անհնարին էր: Ազգի սերն էր առաջնորդիչ ուժը, ազգի իրավունքի հաստատման հրամայականը. «Թող ինձ այսուհետ տգետ կանչեն, լեզուս բաց ա եղել, իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրելի ազգ: Թող տրամաբանություն գիդացողն իր համքարի համար գրի, ես՝ քո կորած, շվարած որդին, քեզ համար: Քանի բերանումս լեզու կա, փորումս՝ սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ. «էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք - ճանաչում»[9]:

Վեպն իր գաղափարաբանական, գեղագիտական, լեզվական ձեռքբերումներով հետագա տարակարծությունների առանցք դարձավ: Բայց որ այն ստեղծման պահից

առ այսօր մեր ազգային դիմանկարը խտացնող, ազգի ապագան կանխանշող առաջին մեծակտավ երկն է, երկու կարծիք լինել չի կարող:

Հայ նոր գրականության սկիզբն ազդարարող «Վերքը» այդ գրականության զարգացումը պայմանավորող դպրոց էր, որից սովորեցին ռոմանտիզմի հայ ներկայացուցիչները: Հայոց մեծ բանաստեղծը՝ Հովհաննես Շիրազը, ժամանակակիցների վկայությամբ, ամեն տարի վերընթերցում էր «Վերքը», թեև գրեթե անգիր գիտեր, որովհետև վեպն ամբողջության մեջ հայրենապաշտության աղոթք է՝ գրված բանաստեղծական հզոր շնչով ու ոգևորությամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ս. Սարինյան, «Հայոց գրականության երկու դարը», հ. 3, Եր., 2002, էջ 105:
2. Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», Եր., 1975, էջ 6:
3. Նույն տեղում, էջ 8:
4. Նույն տեղում, էջ 7:
5. Նույն տեղում, էջ 6:
6. Նույն տեղում, էջ 11:
7. Նույն տեղում, էջ 11:
8. Նույն տեղում, էջ 10:
9. Նույն տեղում, էջ 13:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանի խորհուրդը

Ժաննա Բեգլարյան

Հոդվածում վեր է հանվում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի նշանակությունը՝ նրա գաղափարաբանական, գեղագիտական նկատառումները ճիշտ ընկալելու համար: Խ. Աբովյանը, տեղյակ լինելով մեր աշխարհականացված գրականությանը և եվրոպական վեպի նվաճումներին, իր առաջ խնդիր է դնում գրվելիք վեպով լուծել լեզվի, գաղափարի ու թեմատիկայի խնդիրներ: Արդյունքում՝ արարվում է «Վերք Հայաստանին», որն ազդարարում է հայ նոր գրականության սկիզբը:

РЕЗЮМЕ

Сущность предисловия романа Х. Абовяна “Раны Армении”

Жанна Бегларян

Ключевые слова: *новая армянская литература, достижения прошлого, направления классицизма, армянский менталитет, объект литературы, всемирная цивилизация, фактор национальной защиты, эстетический принцип, представители армянского романтизма.*

В статье рассматривается значимость предисловия романа Х. Абовяна “Раны Армении” для правильного восприятия идеологических и эстетических идей романа. Будучи знаком со светской литературой и с достижениями европейского романа, Х. Абовян ставит перед собой задачу разрешить проблемы языка, идеологии и тематики. В результате создается роман “Раны Армении”, которым знаменуется начало новой армянской литературы.

SUMMARY

The Essence of the Preface of Khachatur Abovyan's the *Wounds Of Armenia*

Zhanna Beglaryan

Keywords: *new Armenian literature, the achievements of the past, Armenian mentality, the object of the literature, world civilization, the factor of national keeping, aesthetic principle, representatives of the Armenian romanticism.*

The article considers the value of the preface of Khachatur Abovyan's *The Wounds of Armenia* for the correct perception of ideological and aesthetic considerations of the novel. Being familiar with secular literature and the achievements of the European novel, Khachatur Abovyan aims to solve the problems of the language, ideology and theme. As a result the novel *The Wounds of Armenia* is created, which marks the beginning of the new Armenian literature.